ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԱՐՄԱՆ ՍՏԵՓԱՆԻ

ՍՅՈՒՆԻՔԻ ՈՒՇՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ
(ԸՍՏ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ)

**Է.00.03 «Հնագիտություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2025

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝ **պ.գ.թ. Նյուրա Գևորգի Հակոբյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ **պ.գ.դ., պրոֆ. Կարեն Արտաշեսի Մաթևոսյան**
պ.գ.թ. Արմինե Լևոնի Զոհրաբյան

Առաջատար կազմակերպություն՝ **Երևանի պետական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2025 թ. հուլիսի 17-ին, ժամը 14:00-ին ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲԿԳԿ-ի «Հնագիտության և ազգագրության» 007 մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0025, ք. Երևան, Չարենցի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2025 թ. հունիսի 18-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

պ.գ.թ. Արսեն Էդուարդի Հարությունյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսությունը նվիրված է պատմական Սյունիք նահանգի ուշմիջնադարյան նյութական մշակույթի լուսաբանմանը՝ այժմյան Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի շրջանակներում, որը համապատասխանում է պատմական գավառների միայն մի մասին՝ Ծղուկ, Հաբանդ, Բաղք, Ձորք, Կովսական, Արևիք: Ներկայիս Սյունիքի մարզը հարավից սահմանակից է Իրանի Իսլամական Հանրապետությանը, արևելքից՝ Ադրբեջանի Հանրապետությանը (նախկինում՝ Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջան), հյուսիսից՝ ՀՀ Վայոց Ձորի մարզին, իսկ արևմուտքից՝ Նախիջևանի Ինքնավար Հանրապետությանը:

Պատմական Սյունիքը տարածվում էր պատմական Հայաստանի հարավ-արևելյան մասում և սահմանագծված էր Այրարատ, Վասպուրական, Արցախ, Ուտիք աշխարհներով: Սյունյաց երկրամասը ըստ «Աշխարհացույց»-ի իններորդն է՝ Երասխ գետի և Արցախի միջև: Շիրակացին թվարկում է 12 գավառ՝ Արևիք, Կովսական, Ձորք, Բաղք, Ծղուկք, Հաբանդ, Երնջակ, Ճահուկ, Աղահեջք, Վայոց ձոր, Գեղարքունիք և Սոդք: Ստեփանոս Օրբելյանի պատմագրքում՝ «Եկեղեցու հարկացուցակ» վերնագրի ներքո, թեև նշված է «Սյունիքի 12 գավառներ», սակայն ցուցակում նշված են 14 անուն գավառ (ավելացված են Այլախն ու Մյուս Բաղքը (Քաշունիքը): Այժմյան Սյունիքի մարզում պատմական գավառների տարածքը տեղաբաշխված է հետևյալ կերպ. Ծղուկ գավառի տարածքը զբաղեցնում է այժմյան Սիսիանի տարածաշրջանը և Գորիսի տարածաշրջանի մի մասը, Հաբանդ գավառի տարածքը համընկնումն է Գորիսի տարածաշրջանի արևմտյան հատվածի հետ, Բաղք գավառի տարածքը ընդգրկում է Կապանի տարածաշրջանի արևելյան մասը, Ողջի գետի վերին հոսանքը զբաղեցնում է Սյունիքի ամենափոքր գավառը՝ Ձորքը, Ծավ գետի ավազանն ընկնում է պատմական Կովսական գավառի տարածքի մեջ, իսկ ամենահարավում՝ Մեղրիի տարածաշրջանը զբաղեցնում է Արևիք գավառը: Ըստ ակադեմիկոս Ս. Երեմյանի՝ պատմական Սյունիքը զբաղեցնում էր ավելի քան 15000 կմ^2 տարածք: 10-րդ դարում Սյունիքից անջատվում են Գեղարքունիք և Սոդք գավառները՝ միանալով Բագրատունյաց կենտրոնական պետությանը: 913 թ. Ատրպատականի ամիրա Յուսուֆը գրավում է Երնջակ բերդը և համանուն գավառի հետ միասին տալիս Գողթնի ամիրայությանը: Հաջորդ դարասկզբին՝ 1003 թ. Սյունիքից տարանջատվում է ևս զգալի մի տարածք՝ Վայոց Ձորն ու շրջակա մի քանի գավառ և միանում Գագիկ Ա թագավորի Բագրատունյաց թագավորությանը: Սյունիքի հարավ-արևելյան մասում 10-րդ դ. 70-ական թթ. կազմավորվում է Սյունիքի թագավորությունը, որի մեջ մտնում էին այժմյան Կապանի, Գորիսի, Մեղրու տարածաշրջանները, Սիսիանի տարածքի հարավային մասը, ինչպես նաև տարածքներ Քաշաթաղի և Կովսականի շրջաններից: Սյունյաց թագավորության հիմնադրման հենց սկզբից Սյունիքից դուրս են մնացել Գեղարքունիք և Սոդք գավառները: Պատմական 12 գավառներից Սյունիքի թագավորության սահմաններում եղել են 7-ը՝ կազմելով 7377 կմ/ք տարածք: Այսպես՝ դար առ դար Սյունիքից անջատվում է զգալի մասը: Շարունակաբար դիմագրավելով սելջուկյան, մոնղոլական, թուրք-թաթարական և այլ ասպատակիչների հարվածներին՝ մեկը մյուսի ետևից ընկնում են Սյունիքի նշանավոր բերդերը: Հետագա քաղաքական և ռազմական հայտնի գործընթացների արդյունքում՝ Սյունիքը այսօրվա ՀՀ տարածքում զբաղեցնում է շուրջ 4500 կմ^2 տարածք:

Սյունիքի մշակութային կյանքի համար առավել նպաստավոր է եղել այն հանգամանքը, որ այստեղով անցել են մի քանի տարանցիկ ճանապարհներ, որոնք կապել են ժամանակի հայտնի կենտրոնները: Այդ ճանապարհների մասին վկայում են կանգուն կամ ավերակված հուշարձանները՝ ամրոցների, կամուրջների, քարավանատների տեսքով:

Ուշ միջնադարը մի ժամանակաշրջան էր, երբ նկատվում է շինարարության բուռն աճ, որին զուգահեռ՝ զանազան արհեստների արտադրանքի՝ մեծ պահանջարկ: Մասնավորապես այդ երևույթը նկատելի է Սյունիքում և Արցախում, որտեղ իրենց ազդեցիկ տեղն են գրավում մելիքական ընտանիքները, որոնք պարսկա-օսմանյան տիրապետության շրջանում, ձեռք բերելով որոշակի իրավունքներ՝ վճռական դեր են խաղում տարածաշրջանի կառավարման հարցերում: Սյունիքում մելիքությունները դառնում են այն գլխավոր ուժը, որի վրա հենվում են ազգային-ազատագրական շարժումները և դրանց առաջամարտիկները՝ Իսրայել Օրին, Դավիթ Բեկը և այլք: Բացի ռազմաքաղաքական գործունեությունից, մելիքները ծավալում են նաև եռանդուն շինարարական աշխատանքներ:

Ուշ միջնադարում՝ մելիքական կիսանկախ շրջանում, հնարավորինս պահպանված աշխարհիկ շինությունների ու եկեղեցիների կողքին շարունակ կառուցվել են նորերը, իսկ երբ պայմանները խիստ անբարենպաստ են եղել նոր շինարարություն ձեռնարկելու համար, սյունեցիներն իրենց տները, եկեղեցիներն, արհեստանոցները, քարավանատները կերտել են ուղղակի անմատչելի քարայրներում: Միանավ պարզ կառույցները կրկին մեծ տարածում են գտնում ուշ միջնադարում: Ընդունված է, որ 17-18-րդ դդ. պարսկական տիրապետության ժամանակ կառուցված շինությունները, փոխառած լինելով հին հուշարձանների հատակագծերն ու արտաքին ձևերը, մեծ մասամբ հասարակ էին և զուրկ ճարտարապետական կառուցողական վարպետությունից: Այդ փոխառման գործընթացը նկատվում է ողջ Հայկական լեռնաշխարհում, երբ ելնելով ծանր պայմաններից ու սուղ միջոցներից, հայերը հիմնականում բավարարվել են միայն «հասարակ» կառույցներով, մերթ ընդ մերթ միայն հատուկ մոտեցում ցույց տալով շքամուտքերին՝ դրանք հնարավորինս ճոխ և ակնառու դարձնելով: Սակայն, ինչպես իրավացիորեն նկատել է ճարտարապետ Պապուխյանը, հայ շինարարը իրեն շրջապատող կառույցներին կարողացել է հաղորդել պարզություն, բայց ոչ միապաղաղություն՝ բովանդակություն հաղորդելով ու վեհացնելով իրենց կոնկրետ դերն ունեցող պարզունակ ձևերն ու ծավալները:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ուշ միջնադարում ևս նորաստեղծ եկեղեցիների կողքին հայկական բնակավայրերում ընդունելի և հարգի է եղել եկեղեցիներ կառուցել ավերված սրբավայրերի հիմքերի վրա, կամ, եթե չեն պահպանվել հիմքերը, նորը կառուցվել է դրանց ենթադրյալ տեղում: Դրանով հայ շինարարները կյանք են տվել խոնարհված սրբավայրերին:

Կառույցները, մեծ մասամբ, շարվել են թերմշակ կամ անմշակ տեղական տարբեր տեսակի և չափերի հանքաքարերով ու գետաքարերով՝ որձաքար, բազալտ (սևակուճ), գրանիտ, որոնց արտաքին՝ տեսանելի նիստերը լինում են քիչ թե շատ հարթեցված-հղկված: Բարձրորակ տուֆի հանքավայրերի բացակայությունը (բացառյալ առանձնակի հատուկենտ վայրերի) դեռևս զարգացած միջնադարից Սյունիքի վարպետներին ստիպել է աշխատել կարծր բազալտի և գրանիտի հետ և քայլ առ քայլ կատարելագործել ճեղքված որձաքարի և այլ քարատեսակների համադրման

տեխնիկան: Դրան զուգահեռ մեծ տարածում է գտնում նորակառույց հոգևոր հաստատությունների որմերում ավելի հին կառույցների մանրամասներ կամ կոթողների բեկորներ տեղադրելու երևույթը: Որպես օրինակ կարելի է բերել Կապանի տարածաշրջանը և, մասնավորապես՝ դրա արևելյան հատվածը, որն ընդգրկում է պատմական Բաղք և Կովսական գավառների տարածքի մի մասը. այն հարուստ է ուշմիջնադարյան կառույցներով, որոնցում ճեղքված որձաքարի տեխնիկան ունի բացարձակ գերակայություն, այնինչ՝ այստեղ ևս զարգացած միջնադարում ընդունված էր սրբատաշ քարերով միդիս շարվածքը: Վերջիններից Կապանի տարածաշրջանում պահպանվել են եզակի օրինակներով և մասամբ վերակառուցված են (Վահանավանք, Վաչագանի և Ուժանիսի եկեղեցիներ): Սյունիքում հրաբխային ապարները հատկապես տարածված են Կապանի, Գորիսի, Սիսիանի տարածաշրջաններում, իսկ բազալտի հանքավայրերից հայտնի են Արծվանիկի, Գորիսի և Շաքիի հանքավայրերը: Սյունիքում գունավոր մետաղների արտահանման ընթացքում արտահանվել է նաև տասնյակ միլիոն խորանարդ քարանյութ, ինչը ևս հաստատում է Սյունիքում բազալտի, գրանիտի հարուստ պաշարներ լինելու փաստը:

Սյունիքի 17-18-րդ դդ. համալիրները գերազանցապես անապատներ են: Վանքերը միասնական կանոնադրությամբ ապրող վանականների համայնքներ էին, հոգևոր և մշակութային կենտրոններ, կրոնական և աշխարհիկ շինությունների համալիրներ: Առաջին անապատների և վանքերի հիմնադրումը Հայաստանում կապված են Գրիգոր Լուսավորչի անվան հետ: Դրանք առաջնորդվել են Լուսավորչի սահմանած կանոնադրությամբ: Ըստ վկայությունների՝ Ներսես Մեծը հիմնել է հազարից ավելի վանքեր: Մեկուսացած վայրերում կառուցվում էին տղամարդկանց անապատները, իսկ կուսանաց անապատները գերազանցապես կառուցվում էին բնակավայրերի ներսում կամ դրանց կից: Անապատների և վանական համալիրների տարբերությունը շոշափելի է նաև ճարտարապետության մեջ: Այն պարագան, որ անապատականները պետք է ապրեին վանքի ներսում, հանգեցնում էր համալիրում մեծ թվով օժանդակ շինությունների կառուցմանը, ինչը հանգամանալից նկարագրվում է Առաքել Դավրիժեցու «Պատմության» ԻԱ գլխում: Անապատների գլխավոր առանձնահատկությունն այն էր, որ դրանք պարտադիր ունենում էին միայն մեկ պաշտամունքային կառույց՝ եկեղեցի, որն էլ հանդիսանում էր իշխող տարրը համալիրի ճարտարապետությունում:

13-14-րդ դդ. սկսած զարգացած միջնադարյան ճարտարապետական դպրոցները աստիճանաբար իրենց տեղը զիջում են հայկական ճարտարապետական մտքի զարգացման միասնական սկզբունքներին և ոճական միաբան առանձնահատկություններին, որոնց քննության արդյունքում դժվար է խոսել առանձին ուղղությունների մասին: Այնուամենայնիվ՝ առանձին տարածաշրջաններում, այդ թվում՝ Սյունիքում, նյութական մշակույթի տարբեր ճյուղերում և կոնկրետ՝ ճարտա-րապետության մեջ, չի կարելի չնկատել որոշակի առանձնահատուկ դրսևորումներ:

15-16-րդ դդ. միջակայքում շինարարական արվեստի անկման պարագայում, հուշարձանների խիստ սակավություն է նկատվում: Մշակութային զարթոնքի համար առավելապես նպաստավոր էին 1639 թ. պարսկա-օսմանյան հաշտությունից մինչև 1720-ական թթ., երբ կարճատև ու հարաբերական խաղաղության պայմաններում Սյունիքում նկատվեց շինարարական բուռն վերելք: Պահպանված հուշարձանների գերակշիռ մասը պատկանում է այդ ժամանակաշրջանին, երբ, անցնելով պարսկական

տիրապետության տակ, տարբեր բնակավայրերից տեղի է ունենում բնակչության բազմահոս ներգաղթ, հիմնվում են նոր գյուղեր, վերաբնակեցվում են հին բնակավայրերը, կառուցվում՝ ապարանքներ, օժանդակ տնտեսական շինություններ, վերակառուցվում են խոնարհված եկեղեցիները կամ դրանց հիմքերի վրա կառուցվում են նորերը, ինչպես նաև գավիթներ, սեղանատներ, զանգակատներ և այլն, որոնցում հաճախակի կիրառվել են բնակելի տների ծածկերի հորինվածքները:

Ուշ միջնադարում կրկին մեծ տարածում են գտնում թաղակիր սրահներն ու եռանավ բազիլիկաները՝ իրենց ենթատիպերով: Հազվադեպ դրանք նաև գմբեթավորվում են: Օրինակ՝ Մեղրու տարածաշրջանում (պատմական Արևիք գավառի տարածք) եկեղեցիների ճնշող մեծամասնությունն առանց գմբեթի է, բացառյալ՝ Մեղրու վանքի, Մեծ թաղի և Տաշտունի եկեղեցիների: Նման շինությունների կառուցումը երկար ժամանակ չէր պահանջում, իսկ որոշակի հետընթացից հետո, հոգևոր արժեքների զարթոնքով պայմանավորված, եկեղեցիների ու վանքերի շուտափույթ կառուցման անհրաժեշտություն էր առաջացել, և շինարարներն հիմնականում կենտրոնացել էին դրանց գործառնական նշանակության վրա:

Թեմայի արդիականությունը: Սյունիքն իր աշխարհագրական դիրքի, նպաստավոր բնակլիմայական պայմանների, հանքավայրերի, տարանցիկ ճանապարհների պատճառով միշտ եղել է տարածաշրջանի ռազմաքաղաքական իրադարձությունների կիզակետում և հանդիսացել օտար ասպատակիչների ռազմական գործողությունների թատերաբեմ: Իր անմատչելի լեռնաշխարհի շնորհիվ Սյունիքն ունեցել է ռազմավարական կարևորագույն նշանակություն, քանի որ տիրել Սյունիքին կնշանակեր իշխող դիրք գրավել տարածաշրջանում և տնօրինող լինել տարանցիկ խաչմերուկի վրա: Հաշվի առնելով այսօրվա ռազմաքաղաքական բարդ իրավիճակն ու հարևան երկրների նկրտումները՝ Սյունիքի ուշմիջնադարյան նյութական մշակույթը լուսաբանելն առավել կարևոր նշանակություն է ձեռք բերում: Ուշ միջնադարում կատարվող ռազմաքաղաքական, տնտեսական և մշակութային գործընթացները լավագույնս արտահայտված են նյութական մշակույթի՝ մեզ հասած բազմաթիվ արժեքներով, որոնք անգնահատելի են տարածաշրջանում մշակութային պատկանելությունն ու էթնիկ գերակայությունը ներկայացնելու տեսանկյունից:

Ատենախոսության հիմքում ընկած են այն հուշարձանների պեղումները, որոնցում ունեցել ենք մեր մասնակցությունը, դրանց արդյունքների վերաբերյալ հրատարակել հոդվածներ, զեկուցել միջազգային և հանրապետական գիտաժողովներին, զբաղվել հայտնաբերված գտածոների ուսումնասիրման և հանրահռչակման աշխատանքներով: Աշխատանքի արդիականությունը մատնանշելու համար բավարար է միայն այն, որ առաջին անգամ փորձ է արվում ներկայացնել Սյունիքի ուշմիջնադարյան նյութական մշակույթի ամփոփ բնութագիրը:

Ուսումնասիրության առարկան, նպատակն ու խնդիրները: Ուսումնասիրության առարկա են ՀՀ Սյունիքի մարզի ուշմիջնադարյան նյութական մշակութային հուշարձանները և պեղումների ընթացքում բացված տարատեսակ գտածոները:

Նպատակն ու խնդիրները: Թեկնածուական ատենախոսության նպատակն է պատմաքննական վերլուծությամբ ներկայացնել Սյունիքի մարզում ուշ միջնադարում կառուցված մշակութային հուշարձանները, ինչպես նաև՝ մեր ղեկավարած կամ մեր մասնակցությամբ կատարված պեղումների ժամանակ բացված տարբեր շինություն-ները (թոնրատներ, աղբահորեր, մթերքի պահոցներ, արհեստանոցներ և այլն),

գտնված տարատեսակ իրերը (խաչքարեր և դրանց առանձին բեկորներ, տապանաքարեր, տպագիր և ձեռագիր թերթեր, խեցեղեն և մետաղյա իրեր):

Ատենախոսության ժամանակագրական սահմանները: Աշխատանքում ամփոփված է ՀՀ Սյունիքի մարզի ուշմիջնադարյան, այսինքն՝ 15-18-րդ դդ. նյութական մշակույթի ուսումնասիրությունը:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Ատենախոսությունը շարադրելիս օգտվել ենք հիմնականում հնագիտավերլուծական և պատմաքննական մեթոդներից: Պեղումների ժամանակ բացահայտված գտածոները դասակարգելիս, թվագրելիս և ուսումնասիրելիս առաջնորդվել ենք նաև նկարագրական, համադրական-վերլուծական, համեմատական մեթոդներով:

Ընդհանուր առմամբ՝ որպես գիտական նորույթ կարևոր են հետևյալ հանգամանքները.

- Ներկայացնել Սյունիքի տարբեր տարածաշրջաններում վերջին տարիներին ուսումնասիրված մի քանի հուշարձանների, այն է՝ Եղվարդ գյուղի Սբ Աստվածածին, Շիկահող գյուղի Սբ Ստեփանոս Նախավկա, Տեղ գյուղի Սբ Գևորգ, Սրաշեն գյուղի Սբ Հռիփսիմե եկեղեցիների, Բեխի կամ Տանձափարախի անապատի, Մեղրիի Սբ Հովհաննես (Անապաստանաց) վանքի պեղումների արդյունքները և պեղումներով հայտնաբերված նյութական մշակույթի բազմաթիվ նմուշները: Թվարկված բոլոր հուշարձաններում պեղումներ իրականացվել են առաջին անգամ, և ներկայացվող նյութը նորույթ է գիտական հանրության համար: 2016 թ. պեղումներ կատարվեցին Հին Գորիսի Մելիք-Հուսեինյաններին վերագրվող ապարանքում՝ իր մի շարք տնտեսական շինություններով: Վերջինս աննախադեպ էր ուշմիջնադարյան Սյունիքի աշխարհիկ կառույցի ամբողջական և համապարփակ ուսումնասիրության տեսանկյունից: Բացի վերը նշված հուշարձաններից՝ հետազոտվել են ևս մի քանիսը, որոնց պեղումներին առանձնակի չենք անդրադառնա, սակայն դրանցում հայտնաբերված տասնյակ գտածոները շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ: Այդ հուշարձանների թվում են Գորիս քաղաքի Սբ Հռիփսիմե, Սվարանց գյուղի Հազարափրկիչ, Մեղրու տարածաշրջանի «Ագարակ» բնակավայրի Սբ Ամենափրկիչ, Սիսիանի տարածաշրջանի Շաղատ գյուղի Սբ Գևորգ եկեղեցիները և այլն:
- Լուսաբանել հետազոտված տնտեսական նշանակության զանազան կառույցները՝ թոնրատներ, աղբահորեր, մթերքի պահոցներ, արհեստանոցներ և այլն: Սույն տնտեսական ենթակառույցների պեղումները տվել են զգալի քանակության հնագիտական նյութ, որոնք նորույթ են ուշմիջնադարյան Սյունիքի տնտեսական կացության փաստագրման համար:
- Լուսաբանել վերոնշյալ հուշարձաններում աշխատանքների ընթացքում գտնված տապանաքարերը, խաչքարերը, արձանագիր, խաչաքանդակ բեկորները, հարթաքանդակները և այլն:
- Վերլուծել և նկարագրել հսկայական քանակության հնագիտական նյութը՝ շինարարական և առտնին խեցեղեն, ապակե, հախճապակե, մետաղե և այլ նյութերից բազմաթիվ առարկաներ և բեկորներ:
- Շրջանառության մեջ դնել ռադիոածխածնային հետազոտությունների տվյալներ, հնաբուսաբանական, երկրաբանական հետազոտությունների տվյալներ:
- Շրջանառության մեջ դնել ուշմիջնադարյան հուշարձանների գծագրեր՝ հատակագծեր, կտրվածքներ և այլն:

Թեմայի ուսումնասիրվածության աստիճանը (Սկզբնաղբյուրների և գրականության տեսություն): Սյունիքի պատմության և հուշարձանների ուսումնասիրության սկզբնաղբյուրները կարելի է բաժանել երեք խոշոր խմբերի.

ա/ Մատենագրական հաղորդումներ,

բ/ Ճանապարհորդական ուղեցույցներ,

գ/ Վիմական արձանագրություններ:

Հայաստանի ուշ միջնադարը տվել է այնպիսի պատմիչներ և տարեգիրներ, ինչպիսիք են Գրիգոր Խլաթեցին, Թովմա Մեծոփեցին (14-15-րդ դդ.), Առաքել Դավրիժեցին, Գրիգոր Դարանաղցին, Զաքարիա Ագուլեցին, Զաքարիա Սարկավագը, Հակոբ Կարնեցին, Մինաս վարդապետը, Աբրահամ Կրետացին, Սիմեոն Երևանցին, Եսայի Հասան Ջալալյանցը, Խաչատուր Ջուղայեցին (17-18-րդ դդ.) և այլք, որոնց աշխատությունները անգնահատելի տվյալներ են պարունակում զանազան հուշարձանների վերաբերյալ:

Ոչ պակաս կարևոր են ուղեգիր-ճանապարհորդների ալբոմ-ուղեցույցները, որոնցում առկա բազմաթիվ հուշարձանների նկարագրությունները առաջնային կարևորության փաստաթղթեր են ցանկացած հուշարձանի համար: Այս աշխատություններից առաջին հերթին հիշարժան են մեծանուն հայագետներ Մեսրոպ Թաղիադյանցի, Սարգիս Ջալալյանցի, Գարեգին Սրվանձտյանցի, Հովհաննես Շահխաթունյանցի, Ստեփան Տեր-Ավետիքյանի, Երվանդ Լալայանի, Քաջբերունու աշխատությունները, որոնք հիմնաքարեր են ցանկացած հետազոտողի համար: Մեծարժեք է Ղևոնդ Ալիշանի «Սիսական» երկը, որը մեր ատենախոսության կարևորագույն ուղեցույցներից մեկն է:

Սյունիքի տարածքում թե՛ խորհրդային և թե՛ հետխորհրդային տարիներին իրագործվել են բազմաթիվ հետազոտություններ, մասնակի և ամբողջական պեղումներ՝ գիտական, պահպանական և վերականգնման ծրագրերի շրջանակներում: Հատկապես արժանահիշատակ են հնագետ Օ. Խնկիկյանի ղեկավարած պեղումները Գորիսի շրջակայքում և Խանածախ, Ակներ, Տեղ, Խոտ, Հարժիս գյուղերում, որոնցից հայտնաբերված հնագիտական նյութերն ընդգրկում են մ.թ.ա. 3-րդ հազարամյակից մինչև 1-ին դարն ընկած ժամանակաշրջանը: Պեղումների քանակը զգալիորեն աճել է հատկապես վերջին տարիներին: Դրանք մասնավորաբար առնչվում են նախաքրիստոնեական տարբեր ժամանակափուլերի հնագիտական հուշարձանների ուսումնասիրությունների հետ: Հուշարձանների վերականգնողական, ամրակայման, բարեկարգման աշխատանքներով պայմանավորված՝ պեղումներ են իրականացվել նաև միջնադարյան հուշարձաններում: Ուսումնասիրությունների հիման վրա ստեղծվել է ստվար գրականություն, որը գերազանցապես նվիրված է կառույցներին և առանձին ճարտարապետական խնդիրների լուսաբանմանը: Հայերեն և օտար լեզուներով հրատարակված մեծաքանակ գրականության մեջ խիստ սակավաթիվ են Սյունիքի պեղումներին, նյութական մշակույթին և մանավանդ՝ ուշմիջնադարյան նյութական մշակույթին առնչվող աշխատությունները: Մեզ համար կարևոր աղբյուրներ են նաև խորհրդային և հետխորհրդային տարիներին տարբեր կոմիտեների և ինստիտուտների կողմից կատարված հետախուզական շրջայցների հաշվետվությունները և դրանց հիման վրա կազմված հաշվառման քարտերն ու վկայագրերը: Սյունիքի միջնադարյան հուշարձաններում 1926-1949 թթ. հետախուզական աշխատանքներ է կատարել Մորուս Հասրաթյանի արշավախումբը, որոնց ընթացքում արձանագրվել են 11-17-րդ դդ.

միջնադարյան մի շարք գերեզմանատներ՝ Սիսիսանի և Գորիսի շրջաններում և 16-18-րդ դդ. շենքեր՝ Գորիսի մի շարք գյուղերում: Նաև վերծանվել և արտագրվել են 12-17-րդ դդ. մի շարք խաչքարերի ու տապանաքարերի արձանագրություններ:

Սյունիքի պատմության ուսումնասիրման տեսակետից առանձնացնում ենք Գր. Գրիգորյանի և Թ. Հակոբյանի աշխատանքները: Սյունիքի հուշարձանների ճարտարապետությանը նվիրված ուսումնասիրությունների մեջ չափազանց կարևորել ենք Մ. Հասրաթյանի աշխատությունները, ինչպես նաև Ստ. Մնացականյանի երկը: Առանձին հուշարձանի՝ Վահանավանքի պեղումներին և վերականգնմանն է նվիրված Գր. Գրիգորյանի աշխատությունը, իսկ Սյունիքի և Արցախի մելիքական ապարանքներին է նվիրված Ա. Ղուլյանի ուսումնասիրությունը:

Ատենախոսության տեսական և կիրառական նշանակությունը:

Տեսական նշանակություն: Աշխատանքի հենքը, հիմնականում, պեղումների ընթացքում ուսումնասիրված հուշարձաններն են՝ վանական համալիրներ, եկեղեցիներ, իշխանական ապարանք, ինչպես նաև դրանց տարածքում բացված տնտեսական և այլ նշանակության շինությունները, գտնված բազմաթիվ իրերը: Այս առումով սույն աշխատանքը ընթերցողին մատուցում է մեր օրերում բացված և հետազոտված մշակութային նորահայտ արժեքներ:

Գործնական նշանակություն: Աշխատանքը կնպաստի Սյունիքի ուշմիջնադարյան նյութական մշակույթն ավելի հանգամանալից ներկայացնելուն: Պեղումների ընթացքում գտնված տարատեսակ իրերը թանգարաններում մաս կկազմեն ցուցադրությունների՝ հանրությանը առավել խորությամբ լուսաբանելով Սյունիքի ուշմիջնադարյան մշակույթի տարբեր ոլորտները: Ատենախոսության առանձին դրույթներ ու եզրակացություններ կարող են օգտագործվել բուհական կրթական համակարգում «Հնագիտություն» առարկան դասավանդելիս:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդում: Այն քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտուի Միջնադարյան հնագիտության բաժինը: Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները արտացոլված են հեղինակի՝ ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից երաշխավորված պարբերականներում հրատարակված հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը: Աշխատանքը բաղկացած է առաջաբանից, չորս գլուխներից և «Եզրակացություններ» բաժնից: **Առաջին գլուխը** պատմաաշխարհագրական համառոտ ակնարկ է, որում, հակիրճ ներկայացնելով Սյունիքի պատմական անցյալը, հիմնական շեշտը դրված է ուշմիջնադարյան պատմաքաղաքական իրադրության վրա:

Երկրորդ գլխում ներկայացված են պեղված հուշարձանները, դրանց ընդհանուր նկարագիրն ու առանձնահատկությունները, պեղումների համառոտ պատմությունը: Զուգահեռ տրված են տվյալ բնակավայրի համառոտ պատմաաշխարհագրական ակնարկը՝ բնակավայրի պատմության համատեքստում, կապը՝ մերձակա հուշարձանների և համադրելիները համաժամանակյա այլ կառույցների հետ:

Երրորդ գլխում լուսաբանված են պեղումներով հայտնաբերված ուշմիջնադարյան կոթողները, այդ թվում՝ տապանաքարերը, խաչքարերը, դրանց բեկորները և այլն: Հաճախ դրանք գտնվել են անխաթար վիճակում, իրենց նախնական տեղում,

բայց գերակշռում են այն դեպքերը, երբ կոթողները հայտնաբերվում են կառույցների պատերի, նույնիսկ լիցքի մեջ կամ փլատակներով ու քարակուտակումներով ծածկված վիճակում: Պարբերաբար կոթողները, որպես սրբագործված մասունքներ, օգտագործվել են եկեղեցիների պատերի մեջ և փլուզումների հետևանքով դրանք ցրվել են տարածքով մեկ: Մեր կատարած աշխատանքների ընթացքում հավաքվել, նկարագրվել և հաշվառվել են այս բոլոր կոթողներն ու բեկորները: Դրանց մի մասը արձանագիր են, հիմնականում՝ շատ հակիրճ տեղեկատվությամբ, սակայն հանդիպում են և բավականին բովանդակալիցները:

Չորրորդ գլուխը վերաբերում է բոլոր այն գտածոներին, որոնք հայտնաբերվել են պեղումների ժամանակ: Ինչպես իրավացիորեն նկատել է ճարտարապետ Նուբար Պապուխյանը, Սյունիքի ճարտարապետությունն իր արմատներով սերտորեն կապված է նյութական մշակույթի հետ: Հոգևոր և աշխարհիկ համալիրներում կառուցվում էին տնտեսական, արհեստագործական բազմապիսի օժանդակ շինություններ, որոնք համայնքին պետք է ապահովեին անհրաժեշտ շինարարական, կենցաղային, ծիսական և այլ նշանակության առարկաներով: Շինարարական գործունեությանը զուգընթաց մեծանում էր խեցեղենի, մետաղյա, ոսկրե, քարե առարկաների արտադրությունը: Կենցաղային և շինարարական խեցեղենը՝ իր չափազանց ուշագրավ նմուշներով, հարստացնում է ուշմիջնադարյան կավագործության վերաբերյալ մեր պատկերացումները: Քիչ չեն ջնարակած խեցեղենի բեկորները: Հայտնաբերվել են նաև ապակյա գտածոներ, մետաղե զարդեր, զենքեր, եկեղեցական սպասքի մասեր, քարե, ոսկրե գործիքներ: Արդյունքում՝ ի մի է հավաքված բավականին խոշոր հավաքածու, որի լուսաբանմամբ կարելի է ներկայացնել Սյունիքի սակավ ուսումնասիրված ուշմիջնադարյան նյութական մշակույթը: Հարկ է նշել, որ ուսումնասիրվող հուշարձաններում ուշմիջնադարյան շերտերը սերտորեն աղերսվում են 13-14-րդ դդ. գտածոներին: Ընդհանուր պատկերը արտահայտելու համար մենք մասնակիորեն անդրադարձել ենք նաև դրանց: Նույնը վերաբերում է նաև ուշ շրջանին, քանզի ուշ միջնադարից անցումը 19-րդ դ. բավականին սահուն է, ուստի այդ շրջանի նյութերը նույնպես որոշակիորեն արտացոլված են ատենախոսության մեջ:

Աշխատանքն ավարտվում է **«Եզրակացություններ»** բաժնով, որտեղ ամփոփված է ողջ աշխատության արդյունքը և դրա հիման վրա կատարված եզրակացությունները.

1/ Չնայած ժամանակաշրջանի թելադրող դժվարին կացությանը, այնուամենայնիվ, Սյունիքում ուշ միջնադարում մշակութային կյանքն ամբողջությամբ կանգ չի առնում: Սյունիքում պահպանված կիսանկախ դրությունը թույլ էր տալիս, որ արհեստները շարունակեն են իրենց գոյությունը՝ բազմազան ճյուղավորումներով, ապա նաև բուռն զարգացում ապրեն:

2/ Առավել մեծ միջոցներ պահանջող ոլորտներում, այն է՝ ճարտարապետություն, քանդակագործություն, խաչքարագործություն և այլն, նկատվում է որոշակի պարզեցում: Ֆինանսական միջոցները լուծվում էին, հիմնականում, կա՛մ մելիքական ընտանիքների հոգածությամբ, կա՛մ համայնքի ընդհանուր «արդեամբ»: Կարևոր է նկատել նաև այն, որ ժամանակի ընթացքում ճարտարապետության և քանդակագործության այդ ձևերը դառնում են առավել ընդունելի և սովորության ուժով գտնում մեծ տարածում:

3/ Նյութական մշակույթի զանազան ասպարեզներին առնչվող մեծաքանակ գտածոները ցույց են տալիս, որ վերոնշյալ պարզեցումը համընդգրկուն բնույթ չի կրել, և արհեստների զանազան ճյուղերը՝ խեցեգործություն, մետաղագործություն, փայտամշակություն, որմնանկարչություն, ապակեգործություն և այլն, ոչ միայն զարգացում են ապրել, այլև որոշ դեպքերում ներկայացնում են արվեստի բարձրարժեք գործեր՝ իրենց ինքնատիպությամբ ու առանձնահատկություններով հանդերձ:

4/ 17-րդ դարում, կապված վերաբնակեցումների հետ, տեղի է ունենում շինարարության համատարած բռնկում, ինչը բնորոշ է գրեթե ողջ Հայաստանին, սակայն առավել ակնառու է Սյունիքում և Արցախում, որտեղ բոլոր բնակավայրերում բնակիչների հոգևոր կարիքների համար կառուցվում են անապատական համալիրներ, առանձին եկեղեցիներ, վանքերի առանձին կառույցներ:

5/ Ուշմիջնադարյան եկեղեցիները, հիմնականում, կառուցվել են նախկինում հայտնի սրբավայրերի տարածքում, որտեղ կա՛մ պահպանված էին հին եկեղեցիների հիմքերը, կա՛մ ենթադրելի էին դրանց տեղերը: Որոշ դեպքերում պեղումները մեզ հնարավորություն են տալիս պնդելու սույն վարկածը, իսկ երբեմն էլ՝ տեսանելի են զարգացած և վաղմիջնադարյան կառույցների հիմնապատերը (Վերիշենի Սբ Հռիփսիմե, Ուժանիսի եկեղեցի և այլն): Հաճախ եկեղեցիներ կառուցել են նախկին գերեզմանոցների տարածքում: Ընդ որում՝ ընդունված է եղել եկեղեցուն կից՝ հնարավորինս նրա հիմքերի մոտ, կատարել թաղումներ՝ հոգու փրկության համար բարեխոս ու հովանի ունենալով եկեղեցին: Ընդ որում՝ թաղումները, սկսվելով եկեղեցու պատերի մոտից, հաջորդաբար տարածվել են, արդյունքում ձևավորելով թաղումների և կոթողների ժամանակագրական հաջորդականություն:

Ի տարբերություն զարգացած միջնադարի, ուշմիջնադարյան վանական համալիրները հիմնականում սահմանափակված են մեկական եկեղեցիով, որոնց շուրջ ձևավորվել են հոգևոր, կենցաղային, տնտեսական, արհեստագործական զանազան շինություններ: Եկեղեցին հանդիսանում է համալիրի գլխավոր կառույցը նաև ճարտարապետության տեսանկյունից, և մնացած շինությունները կառուցվում են եկեղեցու հետ համադրությամբ: Հաճախ եկեղեցիների պատերին կից պեղումներով բացվում են թոնրատներ, շտեմարաններ, բրուտանոցներ և այլն, որպես ցուցիչ այն իրողության, որ եկեղեցին հանդիսանում է արհեստավորական համայնքն իր շուրջը համախմբող կենտրոն:

6/ Ուշմիջնադարյան կառույցները գերազանցապես կառուցված են անմշակ կամ թերմշակ կոպտատաշ որձաքարերով ու կճաքարերով (բազալտ, գրանիտ), սակայն այստեղ հանդես են գալիս որոշակի կանոնիկություն և քարերի հստակ ընդգծված շարքեր: Եկեղեցիները, նույնպես, բացառություն չեն: Որպես պատճառ կարող էին լինել մի քանի հանգամանք.

ա) Առաջին հերթին, հավանական է, որ վերաբնակեցված գյուղերում, զանազան էթնիկ տարրերի համատեղ գոյակցության խառը ժամանակաշրջանում, հրատապ անհրաժեշտություն էր հայկական ինքնությունը տվյալ բնակավայրում հաստատող և ամրագրող հոգևոր տաճարի գոյությունը: Ուստի հոգևոր կառույցները հիմնարկվել և կառուցվել են արագացված հաճախականությամբ առանց քարերի մշակման վրա շատ ժամանակ ծախսելու:

բ) Քարերի մշակումը պահանջում էր միջոցների և բարձրորակ վարպետների առկայություն, ինչը ուշ միջնադարում բավականին լուրջ խնդիր էր: Քանիցս

եկեղեցիները կառուցվել են բնակիչների ընդհանուր հոգածությամբ, ինչը վավերագրված է մի շարք վիմագրական տվյալներով: Դա, միևնույն է, չի բավականացրել կառուցելու սրբատաշ քարերով և գեղարվեստորեն հագեցած կառույցներ: Իհարկե, որոշ դեպքերում, մանավանդ, երբ գործը նախաձեռնել է հարուստ վերնախավը՝ մելիքական ընտանիքները, եկեղեցիները հագեցել են սրբատաշ մանրամասներով, առանձնակի ուշադրության են արժանացել շքամուտքերը, պատրհանները, իսկ երբեմն էլ՝ ամբողջական որմերը:

գ) Երրորդ պատճառը, ըստ մեզ այն է, որ այսպիսի շարվածքի շինարարական տեխնիկան ժամանակի ընթացքում հանդես է գալիս որպես առանձին ոճ և մեծ ընդունելություն ու տարածում գտնում:

7/ Այնուամենայնիվ՝ հայ շինարարները գտնում են շինությունները զարդարելու միջոցը՝ կառույցի պատերի մեջ օգտագործելով նախկին կառույցներից մնացած քանդակազարդ բեկորները, ճարտարապետական մանրամասները, ավերված գերեզմանոցների կոթողները: Պատերի շատ հատվածներ, մանավանդ մուտքերը, պատուհանները, որմնախորշերը պսակվում են քանդակազարդ քարերով: Հաճախ էլ պատերի անկյունները շարվել են նախկին կառույցի սրբատաշ քարերով: Սրբատաշ քարերով, երբեմն, շարվել են թաղակիր, մույթերն իրար կապող կամարները՝ դրանով միաժամանակ լուծելով մի քանի խնդիր.

ա) Ճոխ քանդակներով և խաչերով սրբատաշ որմնաքարերը հարստացրել են նորակառույց եկեղեցու հարդարանքը՝ թե՛ ներքուստ, թե՛ արտաքուստ: Դրանք ինչ-որ չափով ապահովել են կառույցի գեղագիտական գրավչությունը:

բ) Վերոնշյալները որպես շինաքար օգտագործելով, հնարավորինս կրճատել են ծախսերը:

գ) Նախկին կառույցների քարերը՝ որպես սրբացված մասունքներ նոր պատերի մեջ ագուցելը շեշտել է դրանց հոգևոր արժեքն ու նշանակությունը:

դ) Եվ վերջապես՝ այդ մեթոդը լավագույն միջոց է եղել տարածքի վաղ սրբատեղիների գոյությունը փաստող մանրամասների պահպանության համար, հանգամանք, որ հատկապես կարևոր է հետազոտողներիս համար: Շատ դեպքերում ուշմիջնադարյան կառույցների որմերի մեջ ագուցված զարգացած կամ վաղմիջնադարյան ճարտարապետական մանրամասներն ու կոթողների բեկորները լավագույն վկայությունն են տարածքում վաղ կառույցների գոյության մասին:

8/ Ուշ միջնադարում կրկին կյանքի են կոչվում վաղմիջնադարյան եկեղեցական տիպերը՝ միանավ սրահ, եռանավ բազիլիկա, գմբեթավոր դահլիճ, գմբեթավոր բազիլիկա (վերջինների գմբեթը, երբեմն, պարզապես շարված է լինում տանիքին՝ չպահպանելով գմբեթավորման դասական կանոնները), որոնք տարածում են գտնում ուշմիջնադարյան Հայաստանում:

9/ Աստիճանաբար երևան են գալիս եկեղեցաշինական նոր ենթատիպեր՝ հենված հայտնի ձևերի որոշակի ձևափոխումների վրա: Դրանցից են միանավ և եռանավ կառույցների՝ երկարուկ որմնամույթերով միջանկյալ տեսակը կամ լայն որմնամույթերի շնորհիվ ձևավորված խորշերով տեսակը, որը ծագում է Սյունիքում և իր վերջնական դրսևորումը ստանում Մեղրիում:

10/ Առավել մեծ տարածում են գտնում այնպիսի կառուցվածքներ, ինչպիսիք են գավիթ-նախասրահը, զանգաշտարակը, զանգակատունը: Համալիրները հագենում են մի շարք օժանդակ շինություններով՝ տնտեսական, արհեստագործական սենյակներով,

որոշ դեպքերում պարսպապատվում են: Զարգացած միջնադարյան վանքերը կառուցապատվում են և լրացվում նոր շինություններով:

11/ Եկեղեցիներում կիրառվող շարվածքի ձևը տարածվում է նաև մյուս կառույցների վրա (զանգակատուն, գավիթ-նախասրահ, սեղանատուն, խցեր, տնտեսական և արհեստագործական կառույցներ, պարիսպ և այլն): Ողջ համալիրներ շարվում են միևնույն անմշակ գլաքարերով, ինչի արդյունքում ստացվում է համահունչ կառույցներից բաղկացած անսամբլ:

12/ Հանդիպում են նաև սրբատաշ քարերով շարված կառույցներ, սակայն, որպես կանոն, դրանց հյուսիսային ճակատները շարված են լինում թերմշակ բազալտ կամ գրանիտ քարերով: Հետազոտությունները ցույց են տալիս, որ գերազանցապես հյուսիսային ճակատները կատարել են հենապատի դեր, և դրանց արտաքին երեսները ծածկված են եղել հողի հաստ շերտով:

13/ Կոթողային մշակույթի քննությունը ուշմիջնադարյան Սյունիքում բավականին հակասական պատկեր է տալիս: 15-16-րդ դդ. տապանաքարային մշակույթը հասնում է իր բարձրակետին, ինչն արտահայտվում է ուղղաձիգ և օրորոցաձև տապանների ու պատկերաքանդակների մեծ բազմազանությամբ, որոնցում շատ են նաև եզակի նմուշներ: Դա հատկորեն նկատելի է Սիսիանի և Գորիսի տարածաշրջաններում, որտեղ ուշ միջնադարի և զարգացած ու վաղ միջնադարի հետ կապը այն աստիճան ընդհատված չէ, ինչպես Մեղրիի տարածաշրջանում, որտեղ տապանաքարային մշակույթի անկում է նկատվում: Դրանց փոխարեն երևան են գալիս գերեզմանակոթողի տարատեսակ՝ խաչքարային հորինվածքով սալատապաններ: Սրանք խոշորածավալ, կոպտատաշ քարեր են՝ արմավազարդերի և ակնագնդերով խաչերի պատկերներով: Վերոբերյալներն իրենց բնույթով հանդիսանում են ծածկասալ-տապանաքարի և խաչքարի համադրություն: Քիչ չեն նաև տապանաքարերի վերաօգտագործման դեպքերը: Երբեմն նկատվում է, որ 12-13-րդ դդ. տապանաքարը վերամշակվել և հարմարեցվել է նոր պահանջներին՝ չբացառելով նաև պատկերա-քանդակների խաթարումը:

14/ Խաչքարերը, ընդհանուր առմամբ, կարելի է բաժանել երկու հիմնական խմբի՝ 14-16-րդ դդ. և 17-18-րդ դդ.: Առաջինի դեպքում մենք դեռևս տեսնում են 12-13-րդ դդ. զարգացած միջնադարյան խաչքարային մշակույթի ավանդույթների պահպանում, ճոխ զարդաքանդակներ և այլն: Ողջ Սյունիքում ուշմիջնադարյան մեկ այլ կոթողի տեսակ կարող են համարվել 15-16-րդ դդ. թվագրվող ուղղաձիգ կանգնեցվող և խաչի պարզ փորագրապատկերներ ու հակիրճ արձանագրություն կրող կոթողները: Խաչքարագործության զարթոնքի մի առանձին բռնկում տեսնում ենք Մեղրիում՝ հանձինս ավազաքարային տուֆիտից կերտված բարակ պատերով խաչքարերի, որոնք ոչ թե գերեզմանաքարեր են, այլև եկեղեցիների որմերի համար նախատեսված հուշաքարեր: Այս խաչքարերը իրենց ոճով, արձանագրություններով չափազանց մոտ են Ջուղայի խաչքարերին: Չի բացառվում, որ դրանք ներմուծված լինեն Նախիջևանից կամ հարակից այլ տարածաշրջաններից: Այս խաչքարերը զարդարում են Մեղրիի տարածաշրջանի գրեթե բոլոր եկեղեցիների որմերը և համաժամանակյա են վերոնշյալ խաչաքանդակներով կոթողների հետ:

15/ Խեցեղենի մեջ գերակշռում են անջնարակ անոթները: Որակային առումով դրանք տարբեր են: Գերազանցապես պատրաստված են բրուտի դուրգի վրա, երբեմն ավազախառն են, երբեմն լիարժեք ողորկ: Կրում են պարզ զարդատարրեր՝

հիմնականում սանրանման գործիքով կամ բիզով փորագրված խորակոս գծազարդեր, ալիքագծեր, կամ երկուսը միասին: Կարասների պարագայում զարդագոտիները վերադիր ելուստ գոտիներ են, որոնց վրա մատի կամ գործիքի հպումով ստացել են հատիկաշարեր կամ կետաշարեր:

Ջնարակած խեցեղենը, ինչպես ամենուր, զգալիորեն քիչ է և կազմում է գտածո խեցեղենի փոքր մասը: Սակայն այդ առումով տարբերվում է Մեղրիի տարածաշրջանը, որը, սերտ կապեր ունենալով իրանական աշխարհի և պատմական Վասպուրականի տարածաշրջանի հետ, շոշափելիորեն հարուստ է ջնարակած խեցեղենով:

Սյունիքում գործ ունենք առավելապես խեցեղենի տեղական արտադրանքի հետ: Մեղրիում նկատվում է երեք ուղղություն. ա/ տեղական, բ/ տեղական՝ դրսեկ արտադրանքի ընդօրինակում, գ/ ներմուծված:

16/ Հայտանբերված գտածոների հիման վրա կարելի է ասել, որ մետաղագործությունը միատոն չի զարգացել և հաջորդաբար անցել է անկումների և վերելքների շրջափուլեր: Մետաղական գտածոների մեջ հանդիպում են թե՛ երկաթե կոպիտ գործիքներ ու առարկաներ և թե՛ զանազան այլ մետաղներից պատրաստված նրբճաշակ մանրամասներ: Այստեղ կրկին պետք է առանձնացնել Մեղրին, որտեղից հայտնաբերված պղնձե, արույրից և արծաթյա առարկաները իրենց նրբությամբ և զարդարանքով մրցունակ են զարգացած միջնադարի նշանավոր հնավայրերից գտնված իրերի հետ:

17/ Ուշ միջնադարում մեծապես ավելանում է քարե գործիքների օգտագործումը. տեղական բազալտ, գրանիտ և այլ քարերից պատրաստվում են զանազան կոկիչներ, հարվածող և հղկող հարմարանքներ, տնտեսական բազմապիսի գործիքներ՝ երկանքներ, սանդեր, աղորիքներ և այլն, որոնք առատորեն կան ուշմիջնադարյան գրեթե բոլոր հուշարձաններում:

18/ Ուշմիջնադարյան Սյունիքի նյութական մշակույթի ավանդույթները սահուն կերպով փոխանցվեցին նոր ժամանակներ: Չնայած կարգերի և իրավիճակի փոփոխության՝ ուշմիջնադարյան մշակութային ուղղությունները դրսևորվեցին նաև հետագայում, ինչը հատկապես ակնառու է խեցեգործության մեջ:

Սյունիքի ուշմիջնադարյան նյութական մշակույթի հետազոտման արդյունքում, ի մի բերելով բազմաթիվ գտածոների ընդհանուր բնութագիրը, կարելի է առանձնացնել երեք հիմնական ժամանակափուլ.

ա. 14-15-րդ դդ. - Շարունակվում են պահպանվել զարգացած միջնադարի մշակութային ավանդույթներն ու տեխնոլոգիաները: Զարգացած միջնադարից ուշ միջնադար անցումը կատարվում է սահուն կերպով, և զանազան ոլորտներ շարունակում են դրսևորվել բարձր մակարդակով, ինչը փաստագրվում է պեղումներով գտնված մեծաքանակ և տարատեսակ գտածոներով:

բ. 16-րդ դ. - Ընդգծված անկման փուլ, որն ակնհայտ է ոչ միայն շինարարության մեջ, այլև տնտեսության, արհեստագործության և մշակույթի բազմաթիվ ասպարեզներում:

գ. 17-18-րդ դդ. - Վերազարթոնքի փուլ, երբ եկեղեցաշինությանը զուգընթաց նկատվում է շինարարական բուռն վերելք, ինչի հետ փոխկապակցված զարգանում են տնտեսությունն ու արհեստները, մասնավորաբար խեցեգործությունը, մետաղագործությունը և այլն: Այս զարգացման դրսևորումը ստանում է համատարած բնույթ, սկսում է ընդունել տեխնոլոգիական և տիպաբանական օրինաչափություններ, որոնք և

ի վերջո կերպավորում են ուշմիջնադարյան ժամանակաշրջանը՝ իր ողջ արտահայտչականությամբ ու առանձնահատկություններով:

Մի շարք հուշարձաններում կատարված պեղումների և համընդհանրությունների հիման վրա վեր հանելով Սյունիքի ուշմիջնադարյան նյութական մշակույթի ընդհանուր բնութագիրը՝ կարելի է ասել, որ այն, թեև հանդիսանում է զարգացած միջնադարյան մշակույթի ավանդույթների շարունակողը, սակայն դրսևորվում է նորովի՝ իրեն բնորոշ առանձնահատկություններով ու նորարարություններով: Մշուշոտ հետընթացից հետո Սյունիքում ուշ միջնադարում նկատվում է մշակութային զարթոնք: Ուշ միջնադարը Սյունիքի համար դառնում է ոչ միայն նախկին ավանդույթների ժառանգորդ, այլև հանդիսանում է յուրատեսակ կապող կամուրջ՝ դրանք նոր ժամանակներ փոխանցելու համար: Շատ դեպքերում ուշմիջնադարյան առարկաները շարունակում են կիրառելի լինել ընդհուպ մինչև 20-րդ դ. կեսերը՝ դառնալով ազգագրական ուսումնասիրությունների առարկա:

Ուսումնասիրության առարկան, անխոս, բավականին ծավալուն է, ասելիքները՝ չափազանց շատ: Տարեցտարի ընթացող պեղումները նոր խնդիրներ են առաջ քաշում, նոր բացահայտումները շարունակ լրացնում են մեր ուսումնասիրության առարկայի անվերջանալի թվացող բացը: Ատենախոսության համար, ինչպես նշվեց, հիմք են հանդիսացել Սյունիքի ուշմիջնադարյան շուրջ երկու տասնյակ հուշարձաններն ու դրանց պեղումներով հայտնաբերված բազմահազար գտածոների քննությունը, որը չի կարելի համարել վերջնական և բավարար:

Ատենախոսության վերջում զետեղված են գտածոների երկրաբանական հետազոտությունների եզրակացություններ և հուշարձանների աղյուսակներ, հուշարձանների և գտածոների լուսանկարներ, գրչագրերի և գծապատկերների աղյուսակներ:

- Հավելված 1: Քարտեզների, լուսանկարների, գծագրերի և գրչանկարների աղյուսակներ
- Հավելված 2: Մեղրիի Սբ Հովհաննես վանքի պեղումներով հայտնաբերված քարե գտածոների երկրաբանական հետազոտությունների եզրակացություն
- Հավելված 3: Մեղրիի Սբ Հովհաննես վանքի պեղումներով հնաբուսաբանական նյութերի հետազոտությունների հաշվետվություն /ըստ Ռ. Հովսեփյանի/
- Հավելված 4: Սբ Հովհաննես վանքից հայտանբերված ձեռագիր մատյաններ և տպագիր գրքեր
- Հավելված 5: Մեղրիի Սբ Հովհաննես վանքից հայտնաբերված կտավը
- Հավելված 6: Եղվարդի Սբ Աստվածածին եկեղեցու հարակից տարածքից պեղված մարդաբանական նյութի ռադիոածխածնային հետազոտությունների պատասխանը
- Հավելված 7: Սյունիքի ուշմիջնադարյան եկեղեցիների անվանացանկ՝ ըստ քանակների
- Հավելված 8: Սյունիքի՝ պետական ցուցակում գրանցված ուշմիջնադարյան հուշարձանների ցանկը՝ ըստ տեսակների

- Հավելված 9: Ուշմիջնադարյան խեցաբեկորների տիպաբանական դասակարգման աղյուսակներ՝ Եղվարդի եկեղեցու պեղումներից հայտնաբերված խեցեղենի օրինակով
- Հավելված 10: Մեղրիի Սբ Հովհաննես վանքի պեղումներից հայտնաբերված անջնարակ խեցեղենի քանակական դասակարգում՝ մեկ տարվա կտրվածքով:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԵՆ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ

1. Սիմոնյան Հ., Վասիլյան Լ., Բադալյան Հ., Նալբանդյան Ա, Ալեքսանյան Տ., Կարապետյան Հ., Վերականգնվում է Եղվարդի Սբ Աստվածածին եկեղեցին, Հուշարձան, Երևան, 2008, պրակ Դ-Ե, էջ 268-311
2. Նալբանդյան Ա., Վարդանյան Խ., Ագարակի Ամենափրկիչ եկեղեցու պեղումները, Հուշարձան, Երևան, 2014, պրակ Թ, էջ 49-66
3. Բադալյան Հ., Նալբանդյան Ա., Ալեքսանյան Տ., Նորահայտ դամբարանադաշտ Եղվարդում, Բանբեր հայագիտության, Երևան, 2014, հ 2-3, էջ 127-143
4. Նալբանդյան Ա., Արծանագիր խաչքարեր Մեղրիի Սբ Հովհաննես (Անապաստանաց) վանքից, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2019, N2, էջ 272-287
5. Նալբանդյան Ա., Գորիսի մելիքական ապարանքի պեղումները, Սյունիքը կրթության և մշակույթի օջախ, 2019, Երևան, էջ 167-185
6. Միրիջանյան Դ., Նալբանդյան Ա., Լուսավորության միջոցները թաղման ծեսում, Բանբեր հայագիտության, Երևան, 2019, N 3, 108-121
7. Նալբանդյան Ա., Սիմոնյան Ա., Նորահայտ պատառիկներ Մեղրիի Սբ Հովհաննես եկեղեցու պեղումներից, Բանբեր Մատենադարանի, 2020, հ 29, էջ 198-206
8. Նալբանդյան Ս., Նալբանդյան Ա., Բադալյան Հ., Ալեքսանյան Տ., Տանձափարախի անապատի 2012-2019 թթ. պեղումների արդյունքները, Հուշարձան, Երևան, 2021, պրակ ԺԶ, էջ 85-119
9. Նալբանդյան Ա., Շիկահողի Սբ Ստեփանոս Նախավկա եկեղեցու պեղումների արդյունքները, Աշխատություններ Հայաստանի պատմության թանգարանի, հ 2 (10), Երևան, 2022, էջ 8-17
10. Նալբանդյան Ա., Նորահայտ տապանագրեր Սանահինից, Հայագիտության հարցեր, Երևան, 2022, հ 1 (25), էջ 225-236
11. Նալբանդյան Ա., Միրիջանյան Դ., Սանահինը որպես արքայական և իշխանական հանգստարան, Բանբեր Մատենադարանի, Երևան, 2023, հ 35, էջ 225-234
12. Նալբանդյան Ա., Մեղրիի Սբ Հովհաննես վանքի 2016-2020 թթ. պեղումներով հայտնաբերված մետաղական առարկաները, Լրաբեր հասարակական գիտությունների, 2023, N 3, Երևան, էջ 331-346

НАЛБАНДЯН АРМАН СТЕПАНОВИЧ

ПОЗДНЕСРЕДНЕВЕКОВАЯ МАТЕРИАЛЬНАЯ КУЛЬТУРА СЮНИКА
(ПО РЕЗУЛЬТАТАМ РАСКОПОК ПОСЛЕДНИХ ЛЕТ)

Резюме

Представленная диссертация посвящена освещению позднесредневековой материальной культуры исторической области Сюник, в контексте современного Сюникского марза Республики Армения, который соответствует лишь части исторических регионов, таких как Цгук, Хабанд, Багк, Дзорк, Ковсакан, Аревик. Современный Сюникский марз граничит на севере с Вайоцдзорским марзом Республики Армения, на юге - с Исламской Республикой Иран, на западе - с Нахичеванской Автономной Республикой, на востоке - с Азербайджанской Республикой (бывший Кашатагский район РА).

Благодаря своему географическому положению, благоприятным климатическим условиям, месторождениям полезных ископаемых и транзитным путям, Сюник всегда был в центре военно-политических событий региона и, как показывают исторические события, являлся ареной военных действий иностранных завоевателей. Благодаря своей неприступной горной местности, Сюник имел важнейшее стратегическое значение, поскольку иметь контроль над Сюником означало бы занять доминирующее положение в регионе и на транзитном перекрёстке. Учитывая текущую сложную геополитическую ситуацию и амбиции соседних стран, освещение позднесредневековой материальной культуры Сюника приобретает ещё большую значимость. Военно-политические, экономические и культурные процессы позднего Средневековья лучше всего отражены в материальной культуре, представленной многочисленными ценными объектами, которые имеют неоценимое значение с точки зрения культурной принадлежности и этнического превосходства в регионе.

Основу данной диссертации составляют раскопки памятников, в которых мы принимали участие и по результатам которых составил итоговые отчеты. По ним были опубликованы статьи, а также была проведена работа по изучению и популяризации обнаруженных артефактов. Чтобы подчеркнуть актуальность работы, достаточно того, что в ней впервые предпринята попытка дать общее описание позднесредневековой материальной культуры Сюника.

Целью кандидатской диссертации является представление посредством историко-критического анализа памятников культуры, построенных в Сюнике в позднем Средневековье, а также различных сооружений (тандыры, колодцы, кладовые, мастерские и другие), раскрытых в ходе раскопок, проведенных под нашим руководством или с нашим участием, найденных различных предметов (хачкары и их

фрагменты, надгробные камни, печатные и рукописные листы, керамика и металлические изделия).

В целом, научная новизна работы заключается в следующем:

- Представление результатов раскопок нескольких памятников разных регионов Сюника, исследованных в последние годы, таких как церковь Святой Богородицы в селе Ехвард, церковь Святого Степаноса Нахавка в селе Шикаох, церковь Святого Георгия в селе Тех, церковь Святой Рипсиме в селе Срашен, монастырь Святого Иоанна в Мегри, пустыни Беха (Тандзапарах) и множество образцов материальной культуры, найденных при раскопках. Все эти раскопки проводились впервые, и представленные в работе материалы являются новыми для научной общественности. В 2016 году раскопки проводились в старом Горисе, в комплексе, относящемся к роду Мелик-Гусейновых, с рядом хозяйственных построек. Это было уникально с точки зрения полного и всестороннего исследования мирских зданий позднесредневекового Сюника. Кроме вышеупомянутых, исследованы также несколько других памятников, раскопки которых мы не будем подробно рассматривать, однако десятки находок, обнаруженных в этих памятниках, впервые вводятся в научный оборот. Среди них — церковь Святой Рипсиме в городе Горис, церковь Святой Богородицы в селе Сваранц, церковь Святого Спасителя в поселении «Агарак» в Мегри, церковь Святого Георгия в селе Шахат Сисианского района и другие.
- Освещение исследованных, особенно на территориях крупных комплексов, таких как пустынь Тандзапарах и монастырь Святого Иоанна в Мегри, различных хозяйственных сооружений — тандыров, колодцев, кладовых, мастерских и т.д. Раскопки данных хозяйственных объектов дали значительное количество археологического материала, который представляет собой новизну для документирования хозяйственного положения позднесредневекового Сюника.
- Освещение надгробных камней, хачкаров, фрагментов резных крестов и надписей, барельефов и других артефактов, найденных в ходе работ на вышеупомянутых памятниках.
- Анализ и описание огромного количества археологического материала — строительной и бытовой керамики, стеклянных и фарфоровых предметов, многочисленных металлических изделий и их фрагментов.
- Включение данных радиоуглеродных исследований, археоботанических и геологических исследований.
- Включение чертежей памятников позднего Средневековья, таких как планы, разрезы и другие.

На основании раскопок и обобщений по ряду памятников, выделяющих общие характеристики позднесредневековой материальной культуры Сюника, можно сказать, что она хотя и является продолжением традиций развитой средневековой культуры, но проявляется по-новому, с характерными для нее особенностями и нововведениями. После смутного упадка в позднем Средневековье в Сюнике наблюдается культурный расцвет. Для Сюника позднее Средневековье становится не только наследником прежних традиций, но и своеобразным связующим мостом для переноса их в новое время, которые находят свое применение вплоть до середины 20-го века, становясь предметом этнографических исследований.

NALBANDYAN ARMAN STEPAN

THE LATE MEDIEVAL MATERIAL CULTURE OF SYUNIK (BASED ON THE RESULTS OF RECENT EXCAVATIONS)

Summary

The presented dissertation is dedicated to the study of the late medieval material culture of the historical Syunik province in the context of the present-day Syunik region of the Republic of Armenia. This region corresponds only to a part of the historical districts, including Tsghuk, Haband, Baghk, Dzork, Kovsakan, and Arevik. The current Syunik region is bordered to the north by the Vayots Dzor region of Armenia, to the south by the Islamic Republic of Iran, to the west by the Nakhchivan Autonomous Republic, and to the east by the Republic of Azerbaijan (formerly: Kashatagh Region of the Republic of Artsakh).

Due to its geographical location, favorable living and climatic conditions, mineral deposits, and transit routes, Syunik has always been at the center of geopolitical and military events in the region. As historical events indicate, it has often served as a battlefield for foreign invaders' military campaigns. Due to its inaccessible mountainous highlands, Syunik has held significant strategic importance, as controlling Syunik meant gaining a dominant position in the region and overseeing a crucial transit crossroads.

Taking into account today's complex military and political situation and the ambitions of neighboring countries, highlighting the late medieval material culture of Syunik has gained even greater significance. The military, political, economic, and cultural processes of the Late Middle Ages are best reflected in the material culture through numerous preserved artifacts. These artifacts are invaluable for demonstrating the region's cultural identity and ethnic dominance.

This dissertation is based on the excavations of monuments in which I personally participated, compiling summary reports on their results, publishing articles about them, and contributing to the study and public presentation of the discovered artifacts. To highlight the relevance of this research, it is sufficient to note that, for the first time, an

attempt is being made to provide a summary description of the late medieval material culture of Syunik.

The aim of this doctoral dissertation is to present a historical and critical analysis of the cultural monuments built in the Syunik region during the Late Middle Ages, as well as various structures uncovered during excavations conducted under our leadership or with our participation. These include bakeries (tonratun), waste pits, food storage facilities, workshops, and more. Additionally, the study examines various discovered artifacts, such as cross-stones (khachkar) and their fragments, tombstones, printed and manuscript pages, ceramic and metal objects.

In general, the following aspects are of particular importance as scientific novelties:

- To present the results of recent studies on several monuments in different regions of Syunik, including the excavations of St. Astvatsatsin Church in the village of Yeghvard, St. Stepanos Nakhavka in the village of Shikahogh, St. Gevorg Church in the village of Tegh, St. Hripsime Church in the village of Srashen, the Bekh (Tandzaparakh) Monastery, and St. Hovhannes (Anapastanats) Monastery in Meghri, and numerous artifacts of material culture discovered during these excavations. Excavations were conducted for the first time at all the presented monuments, making the findings a novelty for the scientific community. In 2016, excavations were carried out at the Melik-Huseinyan Palace in Old Goris, along with its various economic structures. This research was unprecedented, as it provided a comprehensive and in-depth study of a secular architectural complex from late medieval Syunik. The latter was unprecedented, as it provided a comprehensive and in-depth study of a secular architectural complex from late medieval Syunik. In addition to the aforementioned monuments, several other sites have also been investigated. While their excavations will not be discussed in detail, dozens of artifacts discovered there are being introduced into academic circulation for the first time. These monuments include St. Hripsime Church in the city of Goris, St. Astvatsatsin Church in the village of Svarants, St. Amenaprkich Church in the "Agarak" settlement of the Meghri region, St. Gevorg Church in the village of Shaghat in the Sisian region, and others.
- To shed light on the various economic structures studied within large complexes, such as Tandzaparakh Monastery and St. Hovhannes Monastery in Meghri. These include bakeries (tonratuns), waste pits, food storage facilities, workshops, and other utility buildings. The excavations of these economic substructures have yielded a significant amount of archaeological material, which is a novelty in documenting the economic conditions of late medieval Syunik.
- To highlight the tombstones, khachkars, inscribed and cross-carved fragments, bas-reliefs, and other artifacts discovered during the excavations at the aforementioned monuments.

- To analyze and describe the vast amount of archaeological material, including construction and household ceramics, glass, faience, numerous metal objects, and fragments.
- To disseminate the data from radiocarbon dating, archaeobotanical, and geological studies.
- To disseminate the drawings of late medieval monuments, including floor plans, cross-sections, and other architectural diagrams.

Based on the excavations conducted at several monuments and the identified commonalities, it can be concluded that the late medieval material culture of Syunik, while continuing the traditions of the developed medieval culture, manifests itself in a distinct way with its unique characteristics and innovations.